№ 7 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 22

1904
ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 7 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 22

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է օգտվենք առիթից.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարձրագոյն հրաման. Մատենագրութիւն. Վրաց թատրոն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անհետացած մի քանի դէմքեր. Հեռաւոր Արևելքում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հարսանիքների սեզոնը։

ՊԷՏՔ Է ՕԳՏՎԵՆՔ ԱՌԻԹԻՑ

«Մշակի» № 5-ում, խօսելով համաշխարհային ցուցահանդէսի մասին, որ պէտք է տեղի ունենայ Ամերիկայի Սէնթ-Լուի քաղաքում, մենք օգտվեցինք դէպքից յայտնելու, որ Ամերիկա գաղթած հայերը սկսել են նպաստել առևտրական յարաբերութիւնների ընդարձակման և ուժեղացման Ամերիկայի և մերձաւոր Արևելքի մէջ։ Հայերը բացել են արևելեան առևտրի գրասենեակներ և վերցնում են իրանց վրա միջնորդների դեր Ամերիկայի և Արևելքի մէջ։ Քանի գնայ, սկսած յարաբերութիւնները պէտք է մեծանան և միևնոյն ժամանակ պէտք է աւելանայ այն առարկաների թիւը, որոնք մտնում են փոխանակութեան շրջանի մէջ։

Մենք կարևոր ենք համարում ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վրա, որ Ամերիկան պէտք է մեզ համար կատարէ նաև մի մեծ ուսուցչի պաշտօն։ Զը նայելով այն հեռաւորութեան, որով մենք բաժանված ենք Ամերիկայից, մենք ազդվել ենք նրա կուլտուրայից մի որոշ աստիճան։ Ամերիկայի հասարակական կեանքը, կանանց իրաւունքների ընդարձակումը և բռնած դիրքը հասարակութեան մէջ, մանկավարժութեան մէջ արած առաջադիմութիւնները և արդիւնագործական կեանքի մէջ արած բարեփոխութիւնները գրաւել են դէպի երկրագնդի այդ մասը հին աշխարհի առանձին ուշադրութիւնը։

Եթէ վերցնենք մեր արդիւնագործական կեանքը, մենք կը նկատենք, որ այնպիսի մի խոշոր և հարիւր միլիոնների հարստութիւն պարունակող արդիւնաբերութիւն, ինչպէս է Ապշերոնեան թերակղզու նաւթագործութիւնը իր կատարելագործութիւններով պարտական է Ամերիկային, որ սովորեցրել է մեզ կազմակերպել թէ նաւթահանքերի շահագործութիւնը, թէ նաւթի գործարանական մշակումը և թէ նաւթի արտահանումը դէպի վաճառանոց։ Վերցնենք մի ուրիշ օրինակ։ Մեր երկրի բամբակագործութիւնը, որ ապրուստ է տալիս բազմաթիւ գիւղացիների Երևանի և Գանձակի նահանգներում, սկսել է բարւոքվել այն օրից, երբ նա մտցրել է կատարելագործութիւններ Ամերիկայի եղանակով։ Մեր երկրի այգեգործութիւնը, որ ջնջվել էր Ամերիկայից գաղթած ֆիլոքսերայի շնորհիւ, այժմ նորից սկսում է վերանորոգվել և վերակազմվել այն վազերի միջոցով, որոնք բերվում են Ամերիկայից։ Մեր երկրի մէջ այժմ տարածվող մի քանի արհեստներ, ինչպէս օրինակ մրգի կօնսերվներ պատրաստելը, բարձր տեսակի ծխախոտ մշակելը, տարածվել են մեզ մօտ Ամերիկայից։

Ուստի շատ կարևոր է, որ մենք օգտվենք ներկայ ցուցահանդէսից և կարողանայինք Ամերիկայից վերցնել շատ օգտաւէտ ցուցումներ մեր երկրի առաջադիմութեան համար։ Ներկայումս Թիֆլիսի երկու ընկերութիւններ, գիւղատնտեսական և տեխնիկականը, հարց են յարուցել մասնագէտներ ուղարկելու Ամերիկայի ցուցահանդէսը, որպէս զի նրանք ծանօթանան ցուցահանդէսի այն բաժինների հետ, որոնք ունեն նշանակութիւն Կովկասի համար և վերադառնալով մեր երկիրը նպաստեն պատուաստելու Ամերիկայի կատարելագործութիւնները մեր երկրում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ

Կառավարիչ սենատին յայտարարված ներքին գործերի մինիստրից.

Ներքին գործերի մինիստրին և Տվերի նահանգապետին տրվելու առանձին լիազօրութիւնների մասին ովէրեան զեմստվոյի վերաբերութեամբ ներքին գործերի մինիստրը Նորին Կայսերական Մեծութեան ներկայացրեց ամենահպատակ զեկուցում, որի մէջ ենթադրում էր։

1) Թոյլատրել իրան՝ մինիստրին՝ նշանակել ներկայ եռամեակին նախագահներ և անդամներ Տվերի նահանգային, Նովգորոդի գաւառական զեմստվոների վարչութիւնների, չկատարելով այդ պաշտօնների համար զեմստվոների հաստատութիւնների առիթով որոշված կանոններով նախատեսած կրկնակի ընտրութիւնները, դրա հետ միասին ոչնչացնելով Տվերի նահանգական և Նովգորոդի գաւառական տեղի ունեցած արտակարգ զեմստվոյական ժողովները։

2) Պահպանել 1904 թուին Տվերի զեմստվոյական նախընթաց տարվայ հաշուեկշռի և բաշխման ազդեցութիւնը այն պայմանով, որ եթէ անհրաժեշտ լինի փոփոխել կամ լրացնել նրանց, ներքին գործերի մինիստրը խնդրէ Բարձրագոյն թոյլտուութիւն, զեմստվոյական հաստատութիւնների համար 93 թուին որոշված կանոնների կարգով։

3) Տվերի նահանգական և Նովգորոդի գաւառական զեմստվոյական արտակարգ ժողովների հայեցողութեան ենթակայ ընթացիկ գործերը վճռել նոյն կանոնների 95-րդ յոդուածի որոշած կարգով։

4) Թոյլ տալ ներքին գործերի մինիստրին արգելել Տվերի նահանգի սահմաններում կամ նրա զանազան մասերում բնակվել այն անձերին, որոնք վատ ազդեցութիւն են գործում զեմստվոյի վարչութեան գործերի ընթացքի վրա։

5) Թոյլատրել Տվերի նահանգապետին հեռացնել զեմստվոյական ծառայութիւնից հասարակական կարգի և հանգստութեան համար վնասակար անձերին, որոնք այդ ծառայութեան մէջ են զեմստվոյական վարչութիւնների կամ նրանց նախագահների հրաւէրով կամ նրանց նշանակելովը։

Նորին Կայսերական Մեծութիւնը այդ մասին արված ամենահպատակ զեկուցագրի վրա 1904 թուի յունվար 8-ին, բարեհաճեց Սեփական ձեռքով գրել.—«Համաձայն եմ»

—

Տվերի նահանգի զեմստվոյական հիմնարկութիւնների գործունէութիւնը վաղուց արդէն ուշադրութիւն է դարձնել տալիս իր վրա պետական կարգերի պահանջներին չը համապատասխանող իր ուղղութիւնով։ Այդ ուղղութեան մասնաւոր և առանձնապէս խիստ արտայայտութիւնների մասին շատ անգամ հաղորդված է Բարձրագոյն ուշադրութեան և, դրանց ոչնչացնելու համար, առանձին Կայսերական ցուցումներով, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվել են։ Ժամանակաւոր թարմութիւն մտցնելով զեմստվոյի գործիչների մէջ՝ այդ միջոցները սակայն չկարողացան զեմստվոյին բերել ուղիղ ճանապարհի։ Վերջին տարիներս Տվերի նահանգական զեմստվոյի վնասակար ուղղութիւնն աւելի ևս խստացաւ, արտայայտվելով, ի միջի այլոց, զեմստվոյական ժողովներում անտեղի խորհրդածութիւններով, որոնք ապարդիւն կերպով վրդովում էին մաքերը, և մշտապէս ձգտելով տեղական իշխանութեան հակառակ գնալ, թէև դա պարզապէս վնաս էր գործին։

Դրա հետ միասին Տվերի նահանգում երևան եկան օրինազանցութիւններ նոյն իսկ զեմստվոյական հիմնարկութիւնների կազմութեան մէջ։ Նրա կազմում ստիպանաբար առաջացել էին օրէնքով չը նախատեսած ինքնուրոյն գործադիր հիմնարկութիւններ, ինչպէս առանձին յանձնաժողովներ և խորհուրդներ, որոնք կազմված էին գլխաւորապէս ազատ վարձով ծառայող անձերից։ Այդպիսի յանձնաժողովներ կազմվում էին իբր թէ զեմստվոյական խորհրդներին օժանդակելու, բայց ժամանակի ընթացքում անմիջապէս նրանց ձեռքում կենտրոնացան զեմստվոյի տնտեսութեան առանձին ճիւղերի վարչութիւնը և այդպիսով, զեմստվոյի գործերի ուղղութեան մէջ իսկական իշխանութիւնը կամաց-կամաց անցաւ այն մարդկանց ձեռքը, որոնք ծառայում էին ազատ վարձով զեմստվոյի մէջ և ոչնչով կապված չէին տրված տեղի հետ։ Միաժամանակ այդ անձերի մէջ երևաց մի տեսակ կազմակերպվելու և ընկերութիւն կազմելու ձգտում, մի ընկերութիւն, որի մէջ մտնելու թոյլ էին տրվում միայն այնպիսի մարդիկ, որոնք իրանց գաղափարակից էին։

Ցիշված երևոյթը և նրա հետ կազմված ոչ ցանկալի հետևանքներն առանձին ուժով զգացվեցին զեմստվոյի ժողովրդական կրթութեան վերաբերող գործունէութեան մէջ։ Կրթական վարչութիւնը յաճախ հաղորդում էր ներքին գործերի մինիստրին, որ Տվերի նահանգի զեմստվոներում, խորհուրդների կողքին առաջ են եկել առանձին խորհուրդներ՝ ժողովրդական ուսուցիչների և վարժուհիների մասնակցութեամբ. այդ բանը դժուարացնում է այդ նահանգում պետական կրթական վարչութեան վերահսկողութիւնը։ Այսպէս՝ Նովգորոդեան գաւառական զեմստվոյի վարչութեան մէջ, ժողովրդական ուսուցիչների ցանկութեան համաձայն, 1903 թուին կազմվել է նրանց մասնակցութեամբ մի կոմիտեա, որ իր գործունէութիւնն անմիջապէս սկսվեց կոմիտեի մեծամասնութեան անհաճոյ ուսուցիչներին հեռացնելու համար միջոցներ ձեռնարկելով։

(Կը շարունակվի)

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Մանուէլեան—„Էսքիզներ". Բաքու, 1903, եր. 30. գինը 5 կոպէկ։

Տեսարանների գրականութիւնը վերսկսվել է. յաճախ լոյս են տեսնում փոքրիկ, էժանագին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐԻ ՍԵԶՕՆԸ

(Նամակ Շուշուց, Յունվարի 15-ին)

—

Մեզ մօտ սկսվել են հարսանիքների սեզօնը։ Մարդիկ պսակվում են։

—Ի՞նչ մի զարմանալու բան կայ այստեղ, որ պսակվում են—կը հարցնէք դուք։

Այո, ճիշտ որ զարմանալու ոչինչ չկայ, եթէ այդ պսակվելու մէջ տարօրինակութիւններ չընկատվէին։

Ներկայ դարում, մարդիկ կապում են իրանց կեանքը այնպիսի անձնաւորութիւնների հետ, որոնց լաւ ճանաչում, նրանց բնաւորութիւնը ուսումնասիրում ու որոշ եզրակացութեան են գալիս։ Այս բանը մանաւանդ մեծ նշանակութիւն ունի կրթվածների համար, որովհետև նրանց բնաւորութիւնները աւելի բարդ են լինում։ Շատ կարելի է և այդ սովորութիւնը տեղի ունի քաղաքակրթված ազգերի մէջ։ Մինչդեռ այդ quasi օրէնքը, ինչպէս երևում է, մեզ, հայերիս համար, նշանակութիւն չունի ոչ միայն քաղաքակրթութեան հոտն առածների, այլ և... համալսարանի շէմքերը մի քանի տարի մաշածների համար։

Իսկական և մաքուր սէրը, որը պիտի կապէ երկուսի կեանքը—գոյութիւն չունի ներկայ XX դարում։ Եւ դա պատահում է յաճախ, կրկնում ենք, քաղաքակրթվածների մէջ։ Սա մի կատարեալ նախատինք է...

Ֆէմինիստները պահանջում են, որ կնոջ հաւասար կրթութիւն տրվի տղամարդու հետ։ Սրանով, շատ պարզ է, յարգելի ֆէմինիստները ուզում են կանանց ինքնաճանաչութեան հասցնել, հաւասարել դրանց իրաւունքները և այն դերը, որ պիտի խաղան ընդհանուր քաղաքակրթութիւնը առաջ տանելու համար։

Սակայն փորձերը, այն էլ յաճախակի փորձերը, ցոյց են տալիս, որ օրիորդները աւարտելով գիմնազիա, նկատի ունեն ոչ թէ գիտակցութիւն, զարգացում ձեռք բերելու, այլ աւելի շուտ փեսացուներին դուր գալու։

Շատերը, կրթութիւն տալով իրանց աղջիկներին գիմնազիայում, կարծում են դրանով իրանց պարտքը կատարեցին։ Իսկ օրիորդները գիմնազիական վկայականը, երբեմն էլ «ոսկեայ» կամ «արծաթեայ» մեդալը ձեռքներին, եօթնեորդ երկնքումն են կարծում իրանց։

Աւարտելով որ և է դպրոց, օրիորդները կարծում են ամեն ինչ վերջացած պէտք է համարել ապագայ «կիսի» մասին։ Էլ հետաքրքրվել գրականութեամբ, ծանօթանալ եռող կեանքի հարցերով, վերջապէս ծանօթանալ մայրական պարտականութիւնների, ապագայ երեխաների դաստիարակութեան հետ և այլն, յարգելի օրիորդները հարկաւոր չեն համարում։ Ի հարկէ, դա իրանց մեղքն է, որից քիչ չեն տուժում յետոյ։

Ահա այդ մեծամիտ կարծիքները ծնողի և աղջկայ—մի կողմից, համալսարանի շէմքերը—մաշածների հեշտասիրական տենչերը՝ միւս կողմից, առաջ են բերում մի անտանելի, ինքնասէր, «փորային» հարցով բռնված և վերին աստիճանի անտարբեր մի դասակարգ, որի անդամները մի մի «հրէշ» կարող են կոչվել։

Գիմնազիա կամ որ և է ուրիշ դպրոց աւարտած աղջիկների վրա մենք սովորել ենք ուրիշ աչքով նայել, կարծելով թէ դրանք այսպէս թէ այնպէս կրթված մարդիկ են, հետեւապէս և գիտակցաբար կը վերաբերվեն թէկուզ ամուսնութեան նման մի կարևոր հարցին։ Վերջապէս պէտք էր ենթադրել, թէ այդպիսի մայրերը կը տան սովորականից մի նախանձելի սերունդ, որից շատ բան կարելի էր սպասել։ Բայց դժան իրականութիւնը դարձեալ ուրիշ կերպ է թելադրում մեզ, այսինքն հակառակը։ Եւ դա գլխաւորապէս նրա համար, որ մեր գիմնազիավարտ և «դիպլոմաւոր» դասակարգերը իր ժամանակին չը ծանօթանալով, չուսումնասիրելով իրական կեանքի երևոյթները, հանդէս են գալիս անպատրաստ և ապշած են մնում, դէմ առ դէմ կանգնելով կեանքի կեղտերին, այլանդակութիւններին։

Ամբողջովին մեղադրել դրանց այդ բանում չենք համարձակվում, որովհետև դպրոցը կամ համալսարանը, ուր անց են կացնում նրանք իրանց երիտասարդական շրջանը, չէ ծանօթացնում դրանց կեանքի մէջ պատահող անհրաժեշտ կարիքների հետ։ Միւս կողմից էլ ընտանիքը, որի ազդեցութիւնը մեծ պիտի լինի, ոչինչ չէ տալիս իր աղջկան և որդուն։ Մինչդեռ քանիցս անգամ ապացուցված է, որ ինչքան էլ դպրոցը, համալսարանը կրթէ, դաստիարակէ իր աշակերտներին, այնուամենայնիւ ընտանեկան դաստիարակութիւնը մեծ տեղ պէտք է բռնէ։ Այս աքսիոման ի հարկէ նշանակութիւն ունի ուրիշ ազգերի համար, որոնք կուլտուրապէս մի քանի անգամ բարձր են կանգնած քան թէ մենք, որ դեռ խարխափում ենք տգիտութեան մէջ, սովորել ենք ամեն ինչի վրա նեղ հայեացք ունենալ ամեն տեղ ու ամեն գործում «սկզբունքը» առաջ բերել։

Եւ ահա այդպիսի պայմաններում, բաւական է նիւթական որ և է սղութիւն, բաւական է որ և է անախորժութիւն մարդու ու կնոջ մէջ, որ առաջ գան երկուսի մէջ երկպառակութիւններ ու այնուհետև... ապահարզանի հարց։ Բայց որովհետև «ապահարզանը» կապված է մի շարք դժուարութիւնների և անախորժութիւնների հետ, ուստի շատ դէպքերում «ապահարզանի» օգնութեան չեն դիմում, այլ ամուսիններից մէկը, յաճախ կինը, հեռանում է իր «կիսից», ստանալով մի որոշ գումար։

գրքոյկներ։ Մի ամբողջ ժողովրդական գրականութիւն։ Զուսներ դասը, հասարակ ընթերցողը, մատչելի գրքերի պահանջ է առաջացրել, և ահա նրան տալիս են փոքրիկ գրքոյկներ։ Դա մի գեղեցիկ միտք է, եթէ միայն իրագործուին էլ գեղեցիկ լինի։ Մամուլը պիտի առանձին ուշադրութիւն դարձնէ այս էժանագին գրականութեան վրա. ինչ որ էժան է ու փոքրիկ, առհասարակ ուշադրութեան չէ արժանանում, բայց սա անարդարութիւն է։ Պէտք է իմանալ, թէ ինչով են կերակրում ժողովրդական խաւերը, ինչ պակասութիւններ ունի այդ կերակուրը, պէտք է աջակցել խորհուրդներով, պէտք է, վերջապէս, լայնացնել ժողովրդական գրականութեան հորիզոնը։

Առ այժմ մենք մեր առջև ունենք վիպական գրուածքներ, որոնց մէջ կան և՛ թարգմանական, և՛ ինքնուրոյն գործեր։ Վերցնում ենք ինքնուրոյները։ Փոքրիկ գրքից ի՞նչ պահանջներ անէք։ Շատ անգամ կարդում էք մի միամիտ գրուածք է, այնուամենայնիւ, հաշվում էք նրա հետ։ «Պատկեր է», ասում էք դուք։ կարծես պատկերը արժանաւորութիւններ չը պէտք է ունենայ, կամ շատ քիչ պիտի ունենայ։ Ո՛չ, պէտք է որոնել ամեն մի գրուածքի մէջ, ինչ անուն էլ նա ունենայ, որոշ արժանաւորութիւններ. փոքրիկ պատկերի մէջ սովորական գրողը շատ բան չէ կարող անել, բայց մեզ համար բաւական կը լինի և այն, եթէ գրողը կարողանում է հաղորդել իր պատկերին զգացմունք, հաճակրելի գաղափար, եթէ նոյն իսկ չունենալով որ և է տենդենցիա լուսաւորում է պատկերը բնական լոյսով, դընում է նրա մէջ օդ ու արև և ազդում է ընթերցողի սրտի ու մտքի վրայ։

Այս կողմից մեզ գոհացնում է պ. Մանուէլեանի «Էսքիզները». 30 փոքրագիր երեսների վրա նա տալիս է մեզ չորս հատ պատկերներ։ Դրանք մինիատիւրներ են, կեանքի փոքրիկ տեսարաններ։ Ամենից աջողվածը ամենափոքր մինիատիւրն է—«Երեք կօպէկ»։ Կարճ ու անպաճոյճ կերպով պատմված է մի ամբողջ դրամա։ Կոյր երեխան հաց է աշխատում, դունէ դուռը ման գալով և սաղ ածելով ու երգելով։ Նա հիւանդ է, բայց պիտի գնայ իր արհեստին—սա փորի անողոք պահանջ է։ Եւ հիւանդը երգում է մի բակում, լարում է իր ամբողջ ոյժերը՝ մարդկանց ուշադրութեան արժանանալու համար, բայց ուշաթափվում է ընկնում. Եւ այդ ժամանակ վերևից ընկնում է նրա տանջանքների, նրա կեանքի գինը—մի հատ երեք կօպէկանոց։ Հասկանում է՞ ողորմութիւն տուողը, թէ ինչ էր իր այդ սև փողը։ Ի հարկէ, ոչ։ Բակերում, պատերի տակ անյայտ ու անյիշատակ մեռնողների և բարձրերում, պատշգամբաւոր տներում ապրողների մէջ չը կայ ոչ մի առնչութիւն...

«Խրտուիլակ» պատմուածքը մի քիչ մութ է և չէ մշակված. տգեղ, ամենքի ծաղրին ենթարկված գինուորը մահվան բօպէին իր հայրենի գիւղի, իր ծնողների սիրով է վառված։ Բայց ընթերցողը կարծում է թէ այդ կարօտը յանկարծ ծնվեց, անգիտակցաբար։ Խրտուիլակի ներքինը չէ լուսաւորված, և այդ պատճառով տպաւորութիւն չէ թողնում նրա մահը։

«Գարեջրատանը» մի հին սիւժէտ է. անառակութեան և արբեցողութեան շրջան, ուր փչանում են ոչ միայն մեծերը, այլ և փոքրիկները, շատ փոքրիկները։ Եթէ կայ մի նոր, սրտաշարժ գիծ, այդ այն է, որ դուրս է բերված խաալացի թափառական երաժշտի մի ընտանիք. հայրը մեռել է, ոչինչ ժառանգութիւն չը թողնելով իր երեխաներին, բացի բակերում և գինետներում երգի ու երաժշտութեան միջոցով կօպէկներ առնելը։ Եւ այդ ժառանգութիւնը կարող է այն անել, ինչ անում է—փչացնել երեխաներին հարբածների աշխարհում։ Ափսոս որ հեղինակին չէ աջողվել գտնէ մի քանի գծերով նկարագրել այդ երեխաների հոգին։ Անկումը սարսափելի, ցնցող է լինում մանաւանդ այն ժամանակ, երբ տեսնում ես թէ ցեխի մէջ խորասուզվողները ինչ հոգիներ են...

Չորրորդ պատկերը մի տեսարան է Բագուի գործարանական կեանքից։ Անցեալ տարի այդտեղ վիճակագրութիւն կատարվեց, և ահա վիճակագրողներից մէկը պատմում է փոքրիկ տեսարաններ աղքատ աշխատաւորների կեանքից։ Տեսարանները ազդու ու ցնցող են, որովհետև աղքատութեան յատակներից են հանված։—Պէտք է, որքան կարելի է շատ լուսաբանել դժբաղդութեան այդ սարսափելի որջերը...

Պ. Մանուէլեանի գրքոյկը կարդացվում է ախորժակով։

Լ.

—

Նոր ստացված գրքեր. 1) Շահրիար—«Եղոի քոռ բախտը», Թիֆլիս, 1903 թ., եր. 24, գինը 3 կօպէկ, 2) «Учебный Курсъ Вексельнаго Права». сост. помощникъ присяж. поверен. С. Т. Тер-Минасовъ, Тифлисъ, 1903, стр. 70, ц. 60 коп.

ՎՐԱՑ ԹԱՏՐՕՆ

—

Երեքշաբթի, յունվարի 20-ին, վրաց դերասանական խումբը, արքունական թատրօնում, առաջին անգամ ներկայացրեց իշխան Սումբաթովի «Դաւաճանութիւն» նոր պիէսը։

Վրաց հասարակութիւնը, որ անհամբեր սպասում էր այդ նոր պիէսի ներկայացմանը, ծայրէ ի ծայր լցրել էր թատրօնը։

Բովանդակութիւնը չենք բերում, քանի որ հայ հասարակութիւնը ծանօթ է դրա հետ. նոյնպէս պիէսի արժանաւորութեան և պակասութեան մասին ոչինչ չենք ասի, որովհետև սրանով բաւական զբաղվել է մամուլը։ Մեր խօսքը կը լինի դերասանների խաղի մասին։

Դերասանները դաւաճանեցին այս «Դաւաճանութեանը» իրանց խաղով։ Ընդհանրապէս վերցրած՝ գլխաւոր դերակատարները լաւ չը գիտէին դերերը։

Գլխաւոր հերոսուհու—Զէյնաբի դերը խաղում էր Բագուից հրաւիրված տ. Էփեմիա Մէսխի։ Սա շնորհալի, փորձված, խելացի դերասանուհի է առհասարակ, բայց Զէյնաբի դերը սրա ոյժից բարձր է։ Նախ որ դերասանուհու ձայնը շատ թոյլ է և այդ պատճառով էլ պիէսի ուժեղ տեղերում նա չը կարողացաւ տպաւորութիւն գործել, ինչպէս երբորդ և չորրորդ գործողութիւններում. նա այնպէս միօրինակ լալկան ձայնով էր խօսում, որ կարծես աղերսում էր Օթար բէգից մի բան և ոչ խրախուսում։ Տիկինը դերը կարդում էր լաւ, բայց չէր խաղում. խաղին խանգարում էր և միմիկայի բացակայութիւնը։

Գունիան, Օթար բէգի դերում, բաւարար էր, բայց շատ էր ՀՕասում խաղին միմիկայի պակասութիւնը։

Կ. Մէսխին բոլորովին չը կարողացաւ արտայայտել անհոգս ազնուական-զուարճախօս ծառայի տիպը և այդ պատճառով էլ Բէսօն վրաց բեմի վրա կորաւ։

Օր. Դաւիթաշվիլին տեղ տեղ լաւ էր Գայանէի դերում։ Լաւ էին՝ տ. Զերքեզօվան՝ Իսախարի դերում և պ. Ղիփիանին—Անանիայի դերում. թէև պարոնի գրիմը իր հասակից ջահել էր. չէ՞ որ սա ասում է Օթար բէգին՝ ես քո հօր հետ եմ մկրտված. իսկ Օթար բէգն արդէն սպիտակ մազեր ունի։

Ալէքսէեվ-Մէսխիեվը իր հիւանդ ձայնով չը կարողացաւ սպասած տպաւորութիւնը թողնել Սուլէյման-խանի դերի մէջ։

Վատ չէր տիկ. Գարգարեթէլին՝ Ռուբայայի դերում։ Մնացածները թոյլ էին։

Պ. բէժիսօրը ուշադրութիւն չէր դարձրել հագուստների վրա. օրինակ, Անանիայի դաւակները—Դաթօն և Բէսօն—այնպէս էին պճնված, որ վայել էր միայն հարուստ իշխանի որդկերանցը, այն ինչ Անանիան մի հասարակ գիւղի տանուտէր է, միւս կողմից Բէսօն, որ գտվում է Օթար բէգի մօտ, վայելում է ամեն բարիք և ինքն էլ ազնուական է—շատհասարակ և անգոյն էր հագնված։

Շատ թոյլ էին և այն տեսարանները, որտեղ ներկայ էր ամբոխը. սրանց դուրս գալը և ներս գալը կարծես պատուէրով էր, կեանք չը կար։

Զը գիտենք ինչու հինգերորդ գործողութիւնը կրճատել էին և դա շատ վատ ազդեց։

Առհասարակ ընդհանուր տպաւորութիւնը շատ թոյլ էր։

Т.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք յայտնել էինք «Մշակի» ընթերցողներին, որ մենք չենք ընդունում ապառիկ բաժանորդագրութիւն։ Զը նայելով մեր այդ շատ անգամ արած յայտարարութեան, դարձեալ ստանում ենք նամակներ ուղարկելու նրանց լրագիրը ապառիկ վճարումի պայմանով։ Ցաւում ենք, որ անկարող ենք կատարել այդ խնդիրքները։ Ապառիկ բաժանորդագրութեան հետ կապված են շատ դժուարութիւններ և թիւրիմացութիւններ, որոնցից խմբագրութիւնը ցանկանում է իրան ազատ պահել։ Մենք խնդրում ենք յարգել խմբագրութեան այդ որոշումը, որ ունի իր հիմնաւոր պատճառները։

—

Ինչպէս յայտնի է, ներկայումս Թիֆլիսի քաղաքային ուղրավայի մի անդամի տեղը զբաղեցնող Հաւանական թեկնածուներ անուանում են բժիշկ Ա. Խատիսեանին և իշխան Ն. Արղութեանին։

—

Մեր կալուածատէրերից մէկը հնարել է գործիք մորեխը ջարդելու համար։ Այդ գործիքը փորձել են Անդրկասպեան երկրում և եկել են այն եզրակացութեան, որ նա կարող է պիտանի լինել այն դէպքերում, երբ մորեխը ծածկել է մի որոշ տարածութիւն փոքր ի շատէ խիտ կերպով։ Գործիքը, որ գլանակի ձև ունի, գլորվում է հարթութեան վրայով և ջարդում մորեխին։ Այժմ գործիք հնարողը առաջարկում է նոյնը փորձել և Անդրկովկասի այն նահանգներում, ուր մորեխը երևում է մեծ թիւով, օրինակ Բագու և Գանձակի նահանգներում։

—

Լրագրներում կարդում ենք, որ Խարկովի քաղաքային խորհուրդը որոշել է միջնորդել, ուր հարկն է, որ տեղական թերթերն ազատվեն նախնական ցենզուրայից քաղաքի տնտեսութեանը վերաբերող հարցերում։ Ընտրված է մի յատուկ յանձնաժողով այդ միջնորդութեան նախագիծը կազմելու համար։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր, հինգշաբթի, յունվարի 22-ին, նշանակված է Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը, որի պարապմունքի առարկաները կը լինեն. 1) Ընթացիկ գործեր։ 2) Ս. Լուիի համաշխարհային ցուցահանդէսը ուղարկվելիք իրերի տեսութիւնը։ 3) Ա. Քալանթարի զեկուցումը. «Շրջիկ կաթնատնտեսների գործունէութեան մասին Անդրկովկասում»։ 4) Գինեգործութիւնը կարգաւորելու և գինիների կեղծումը պատժելու համար նշանակված յանձնաժողովի զեկուցագրի քննութիւն։ Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։ Նիստին կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք։

—

«Մշակը» շատ անգամ է առիթ ունեցել խօսելու սպառողական ընկերութիւնների մասին առհասարակ Եւրօպայում և մասնաւորապէս Ռուսաստանում։ Այժմ «Новости» լրագիրը հաղորդում է հետևեալ վիճակագրական տեղեկութիւններն այդ առիթով։ 1902 թ. յունվարի 1-ին ամբողջ Ռուսաստանում բոլոր սպառողական և տնտեսական ընկերութիւնների ընդհանուր թիւն էր 654։ Դրանցից միայն 168 ընկերութիւններ տեղեկութիւններ են հաղորդել այդ հարցի ուսումնասիրութեան համար կազմված մասնաժողովին, որի հրատարակութիւններից կարելի է մի հեռաւոր գաղափար միայն կազմել այդ ընկերութիւնների ծաւալի ու գործունէութեան մասին մեզանում։ Այդ 168 ընկերութիւնների անդամների ընդհանուր թիւն է եղել 103,532 հոգի, ծառայողների թիւը—2,274 հոգի. բաժիններից կազմված դրամագլուխը եղել է 3,517,314 ր., փոխառութիւնները՝ 574,702 ր., իսկ պահեստի դրամագլուխը 925,814 բուբլի։

—

Նկատված է, որ շատ դէպքերում տնտեսական պայմաններն են լինում մարդ ու կնոջ միմեանցից բաժանվելու պատճառը։

Մի օրիորդ, որը անց է կացրել իր ժամանակը դասեր «պատրաստելով», ծռոտ-պռոտ գրքեր կարդալով, պարելով և երբեմն էլ անօնիմ նամակներ ստանալով կամ գրելով, յանկարծ, դպրոցը աւարտելով, իրան շուկա է ձգում։ Առաջ են գալիս լօվէլաս փեսացուներ, շատերը Բագուից եկած, և մի քանի ժամանակից յետոյ տեսնում էք երկուսը կապվեցին միմեանց հետ, այն էլ «օրինաւոր» կերպով։ Սկզբում, ի հարկէ, դեռ ոչինչ, մի կերպ «հօլա» են գնում, մանաւանդ որ «մեղը ամսեայ» շրջանումն են գտնվում։ Բայց յետոյ, երբ փեսան կշտանում է, սիրոյ պաշարն էլ վերջացած է լինում և պարզվում է, որ լօվէլաս փեսացուն միջոց չունի «օրինաւոր» կերպով կնոջը պահելու, ուստի պահանջում է իր փափկասուն «կիսից», որ նա աւէջ, լուա, պատրաստէ մինչև անգամ, fi dance!... կերակուրներ, որոնց մէջ առաջնակարգ տեղ են բռնում «կլօլակը» և «տօլման»։ Այդ բոլորի մասին մի կամ երկամսեայ տիկինը ոչինչ չը գիտէ, որովհետև իրան չեն ծանօթացրել դրանց հետ թէ տանը և թէ դպրոցում։ Մեզ մօտ գիմնազիաւարտները մի մի «խանումներ» են, և եթէ ձեռք տանք նրանց, իսկոյն կարող են փշրվել։ Զգուշացէք տղամարդիկ։

Եւ այդպէս, սկզբում, պահանջների հետեւանքն են լինում տհաճութիւններ, անախորժութիւններ և վերջանում է, այսպէս կոչված, զլմազալներով։ Եւ ի՞նչ, այդ բոլոր «գեղեցիկ բաները» տեղի են ունենում շնորհիւ «ազնիւ տնտեսական պայմանների», որոնց, պարզ դարձնելու համար գաւառացիների և մանաւանդ շուշեցիների համար, կանուանենք, եթէ կարելի է այսպէս ասել, «փորային հարց»։

Այդ «փորային հարցը», որքան դիտել և ուսումնասիրել ենք, մեծ դեր է խաղում հիմա։ Հէնց դրա շնորհիւ է, որ մեր փեսացուները, նստելով, օրինակ, Բագու, Թիֆլիս և մինչև անգամ Ռուսաստանի հեռաւոր քաղաքներում, ուր, ի դէպ, կորցրած են լինում իրանց թարմութիւնն ու կուսութիւնը, «ըէցէպտ» են ուղարկում իրանց ծնողներին, պատուիրելով ընտրել կամ ջոկել այնպիսի մի աղջիկ կամ նկատի ունենալ այնպիսի աղջիկներին, որոնց «յատկութիւնները» համապատասխանում են «ըէցէպտի» մէջ նշանակված կէտերին, չը մոռանալով, և որ ամենագլխաւորն է, օժիտի մասին շեշտել։ Ճիշդ բանաստեղծի նման.

. . . . . .

Աղջիկ մը կուզեմ թարմ, սիրուն, խոնարհ,
Եւ հետն ալ... հինգ տասն հազար ոսկի ստակ...

Պարզ բան է, որ այդպիսի մարդիկ ընտանեկան երջանկութեան մասին չեն մտածում։

«Կասկած չը կայ», որ «ըէցէպտով» ամուսնացող մարդը այդ բանը նկատի չունի։

Բայց այս դեռ բոլորը չէ։ Մեր փեսացուների վարմունքը աւելի հեռուն է գնում։ Օրինակ, լինում են այնպիսի փեսացուներ, որոնք երկար ժամանակ ծանօթութիւն ունենալով որ և է աղջկայ հետ, առաջարկութիւն են անում ու նշանվում։ Այդ «նշանը» դարձեալ տևում է երկար ժամանակ (մի կամ երկու տարի), որի ժամանակ փեսան իր ծնողներով, ազգականներով յաճախ է լինում աղջկատիրոջ տանը, ճալով, ի հարկէ, ճաշին, ընթրիքին, թէյին։ Եւ աղջկատէրը անտրտունջ տանում է այսպիսի տգեղ սովորութիւնը, որովհետև կարող է պատահել, որ բողոքի կամ անախորժութեան դէպքում փեսան կարող է «նշանը յետ տալ»։ Այդ անախորժութիւնները ուղղակի կապրիզային բնաւորութիւն են կրում։ Օրինակ, եթէ պատահեց, որ տղատիրոջ կողմից եկողները նկատեցին, որ աղջկատիրոջ տունը կարգի չէ բերված կամ իրանք լաւ չեն հագված և վերջապէս պատրաստ չեն կամ գուցէ և հնարաւորութիւն չունին պատշաճաւոր կերպով ընդունելու դրանց, դա էլ պատճառ է դառնում «նշանը յետ տալուն»։ Խանդոտութիւնն էլ պակաս դեր չէ խաղում այսպիսի դէպքերում, մանաւանդ «կրթվածների շրջանում։ Օրինակ, եթէ օրիորդը յաճախեց այնպիսի տներ կամ ծանօթութիւն պահպանեց այնպիսի մարդկանց հետ, որոնց վարուց ճանաչում է, բայց փեսան ընդդէմ է դրանց, այդպիսի դէպքերում օրիորդը պարտաւոր է հետևել փեսայի հրամանին, որովհետև այդպէս է ցանկանում «նա»։ Եթէ հրամանները ճշտիւ չեն կատարվում, դարձեալ տեսնում էք «նշանը յետ տալու» հարց բարձրացաւ։ Լաւէ, որ այդ «նշան յետ տալը» սուր կերպարանք չէ ընդունում, որովհետև առաջ են գալիս «միջի մարդիկ» և մի կերպ գործը կարգին են բերում։ Հակառակ դէպքում, ի հարկէ, «գործը» վատ կերպարանք է ստանում. օրիորդը և մայրը ուշքից գնում են կամ սրտի թոթոց են ստանում և այնուհետև այդպիսի օրիորդի վրա բոլորովին ուրիշ կերպ են նայում և ոչ ոք առաջարկութիւն չէ անում նրան։

Ահա այսպիսի զզուելի պայմաններում աղջկատէրը ուղղակի խաղալիք է դառնում տղատիրոջ ձեռքին։ Եւ թող զարմանալի չը թվայ ձեզ, ընթերցող, երբ լսէք, որ գաւառական քաղաքներում աղջկան «մարդու» են տալիս 15—17 տարեկան հասակում։ Պատահել է մեզ լսել կարծիքներ, որ աղջիկը, երբ 15—16 տարեկան դառաւ, պէտք է ամուսնացնել, որովհետև ըստ այդպիսի տրամաբանողների, այդ տարեշրջանից յետոյ աղջիկը... թառամում է։ «Թառամած» աղջիկը մի կատարեալ ցաւ է ծնողների համար գաւառական քաքաքում, և որպէս զի նրան «սաղացնեն», տալիս են տարիքով աւելի մեծ մարդու կամ այնպիսի մէկին, որի աշխարհայեցողութիւնը չէ համապատասխանում օրիորդին։

Զարմանալ, որ տեղի են ունենում անհնարամալ երևոյթներ—հարկաւոր չէ, քանի որ դրանց պատճառները տգիտութեամբ են բացատրվում։ Տգէտ ենք... մեզ լոյս է պակասում և նա կարծէք խորշում է մեզնից... ինչո՞ւ... ի՞նչ է պատճառը... Գնանք նրա ետևից... առանց նրան կարող ենք խեղդվել...

Կովկասեան

Ցիշեցնում ենք հայ հասարակութեան, որ այսօր լինելու է տիկին Մայսուրեանի բենեֆիսը։ Տիկին Մայսուրեան մեր բեմի շնորհալի այժերից մինն է և արժանի հասարակութեան համակրութեան ու խրախուսանքին։

—

Գէորգ Մովսէսեան Զիլինգարեան նուիրեց մի օրինակ «Մշակ» Շուլաւէրի գրադարանին։

—

Կուբանեան շրջանի Արմաւիր գիւղը քաղաք դարձնելու հարցը, որ քննվում էր զինուորական խորհրդում, դրական լուծումն ստացաւ։

—

Խարկովից հեռագրում են «Новое Время» լրագրին, որ այնտեղի քաղաքային վարչութեանը ներկայացրել են Խարկովում կանանց բժշկական բարձրագոյն կուրսեր բանալու մասին մի ծրագիր։

—

«Казбекъ» լրագիրը հաղորդում է, որ Ղըզլարի քաղաքային դուման որոշեց 300 ր. օժանդակութիւն տալ և ձրիաբար 3 դեսեատին հողաբաժին յատկացնել Ղզլարի քաղաքային երեքդասարանեան դպրոցին կից գինեգործութեան կուրսեր բաժանելու համար։

—

Առաջիկայ կիրակի, յունվարի 25-ին, Մողնու եկեղեցում նշանակված է երէցփոխի նոր ընտրութիւն։

—

ՎԵՐԻՆ ԱԶԱ գիւղից մեզ գրում են. «Ահա երկու ամիս է ինչ մեզանում երկրի մակերեսյթը ծածկված է ձիւնի հաստ շերտով։ Անցեալ դեկտեմբերի 20-ից սկսեց սաստիկ ցուրտ. երկնքի երեսին ամպի կտոր անգամ չէ երևում. պարզ ու ջինջ է, կատարեալ սառնամանիք է տիրում։ Այս քանի օրս ցուրտը հասնում 19—20, գիշերները 24—25% Ր.։ Դա մի չը տեսնված ցուրտ է մեզանում։ Շատ հաւեր ցրտահար են լինում և սատկում են»։

—

Հին-Նախիջևանի գաւառի ՋԱՀՈՒԿ գիւղից մեզ գրում են. «Ջահուկ գիւղը ունի ներկայումս երկու տարրական դպրոց՝ առաջինը երկդասեան արական, որ բացված է 1885 թւի սեպտեմբերի 1-ին, իսկ միւսը՝ միդասեան օրիորդաց, որ բացվել է, շնորհիւ հայ-ժողովրդի եռանդոտ ջանքերին, անցեալ 1903 թւի սեպտեմբերի 1-ին։ Այդ դպրոցների տուած պտուղներից մէկն այն է, որ ներկայ 1904 թւի յունվարի 7-ին, երեկոյեան ժամի 6-ին, երկդասեան դպրոցի ընդարձակ դահլիճում, յօգուտ չքաւոր աշակերտների, ներկայացվեց Սունդուկեանցի «Պէպո» պիէսան և Մաղաթեանի «Կըռթ-կըռթ» վոդեվիլը։ Դահլիճը լիքն էր խուռն հասարակութեամբ։ Ներկայացումը վերջանալուց յետոյ ժողովուրդը, շնորհակալութիւն յայտնելով դերակատարներին, ուրախ և գեղեցիկ տպաւորութեան ներքոյ ցրվեց տները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՀԵՏԱՑԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԴԷՄՔԵՐ

IV

Երրորդ մահը, որն ուզում ենք արձանագրել այս էջերի մէջ, Հ. Մանուէլ Վ. Քաջունիին է։ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան այդ արդիւնաւոր անդամի անուան կցուած է «Բառագիրք առուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեան»-ը, որը դրա ամենայիշատակելի գործն է։ Հ. Քաջունի երկար տարիներ աշխատած է այս երկհատոր կարևոր բառարանի վրա։ Նրա յիշատակելի գործերից մինը պիտի մնայ նոյնպէս «Համառօտ դասագիրք տարրաբանութեան, քիմիագիտութեան ձեռնարկը, որի միակ արժանիքը կազմում է քիմիական բառերի հայացումը։ Բայց պէտք է ասել, որ հեղինակը՝ ամեն բառ հայացնելու իր եռանդոտ ջանքի մէջ ընկած է ծիծաղելի ծայրայեղութիւնների մէջ։ Այս ծայրայեղութեան միանում էր և մի ուրիշ անպատեհութիւն. եթէ չեմ սխալվում Հ. Քաջունի քիմիական բանաձևերի (ֆորմուլ) մէջ, փոխանակ poids atomique-ը հիմք ընելու, գործ է ածել հին սիստէմը՝ equivalence-ի սիստէմը, որը վաղուց է վերացվել քիմիագիտութեան ուսումից։

Ահա այս պատճառով էլ նրա դասագիրքը ընդունելութիւն չը գտաւ, հայ ուսումնարաններում գործ չածվեց։ Բայց նա դուցէ օգտակարութիւնից բոլորովին զուրկ չը լինի, այն անձի համար, որ կուզէր ապագայում քիմիագիտութեան մի հայերէն ձեռնարկ պատրաստել։

Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը Հ. Քաջունիի պարտական է ոչ միայն գիտական, գրական և իմացական տեսակէտով, այլ և նիւթական տեսակէտով, որովհետև Քաջունի վարդապետը ծանօթ էր գիւղատնտեսութեան և երկրագործութեան և այդ պատճառով էլ նա՝ միաբանութեան՝ Պադուարի մէջ ունեցած հողերը արդիւնաբեր դարձրեց։

Հ. Քաջունի, Պօլսոյ Վենետիկեան միաբանութեան կալուածական և մատակարարական գործերը քննելու համար եկել էր Պոլիս, բայց գործերը քննելու համար եկել էր Պոլիս, բայց գործերը քննելու համար եկել էր Պոլիս, բայց իր գալուց մի շաբաթ յետոյ հիւանդանալով մեռաւ կողատապից։

Հայը Քաջունի՝ 88 տարեկան հասակում մեռաւ. Վենետիկի միաբանութեան համարեա բոլոր երիտասարդ աբեղաները նրան աշակերտել էին։ Հանգուցեալի բաղձանքի համեմատ, մարմինը պիտի փոխադրվի Վենետիկ և պիտի ամփոփուի իր սեփական շիրիմի մէջ, որը պատրաստել տված էր ինքը անձամբ իր կենդանութեան ժամանակ։

Հ. Մանուէլ Քաջունիի մահից յետոյ, Պոլսի լրագրութեան մէջ մի հետաքրքիր վէճ ծագեց։ Հանգուցեալը՝ իր անունով 700 ոսկի հնչուն դրամ դրած լինելով Պոլսի Կրէտի Լիոնէ բանկում, ինչպէս նաև 40,000 ֆրանկի մի ուրիշ գումար՝ նոյն դրամատան Պարիզի կենտրոնատեղում, հարց բարձրացաւ թէ Քաջունի վարդապետի այդ հարստութիւնը ում պէտք է պատկանէր, հանգուցեալի ժառանգորդներին, թէ այն միաբանութեան, որին ուխտով կապված էր գիտնական վարդապետը։ Պոլսի Վենետիկեան Մխիթարեանների ներկայացուցիչ հ. Յուսիկ՝ մի ուրիշ միաբանի ընկերակցութեամբ դիմել է Պոլսի Կրէտի Լէօնէի տնօրինութեան, և պահանջել է, որ բանկում գտնվող 700 ոսկին՝ յանձնվի Վենետկեան Միաբանութեան, քանի որ հանգուցեալը նոյն միաբանութեան անդամ էր մնացել մինչև մահը և օրէնքով մի միաբանի ունեցած բոլոր գոյքն ու հարստութիւնը պատկանում է վանքին։ Բայց բանկի տնօրինութիւնը չէ ընդունել հ. Յուսիկի և նրա ընկերոջ պատճառաբանութիւնը, և յայտարարել է, որ 700 ոսկին՝ դրամատնում զետեղված է հ. Քաջունիի անձնական անունով և նոյն գումարը կը յանձնվի նրանց միայն, որոնք դրամատան կը ներկայացնեն ժառանգորդի օրինական թուղթ։ Իսկ Քաջունիի իսկական ժառանգորդները՝ ներկայացել են Պոլսի հայ-հռոմէականների պատրիարքարանին և պահանջել են, որ վաւերացվի իրանց ժառանգորդութեան օրինական իրաւունքը, որպէս զի իրանց ընկած ժառանգութեան տէր դառան։ Պատրիարքարանը՝ անկարող լինելով ուրիշ կերպ շարժելու, ընդունաբար ստիպվել է հաստատել ժառանգորդների ինքնութեան փաստաթուղթը։

Հետաքրքիր է այժմ տեսնել, թէ ինչպէս պէտք է վերջանայ այս վէճը։ Միաբանութիւնը տրամադիր չէ բնաւ տեղի տալու և վերջին տեղեկութիւնների համաձայն, Վենետկեան Միաբանութեան Աբբահայր՝ Կիւրեղեան արքեպիսկոպոս՝ Միաբանութեան պաշտօնական փոխանորդ կարգելով Պոլսի հ. Յուսիկ վարդապետը, հրամայել է, որ ամեն միջոց գործ դրվի Միաբանութեան իրաւունքը հաստատելու համար։ Ի պահանջել հարկին Միաբանութիւնը նոյն իսկ դատ պէտք է բանայ դրամատն դէմ և արգելքի տակ առնէ 700 ոսկու գումարը, մինչև որ հարցը վճռվի դատաւորութեամբ ի նպաստ կամ ի վնաս Միաբանութեան։

Տիգրան

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—

Եապօնիան երաշխաւորութիւն է պահանջում։ Վիէննայի «Neue Freie Presse» լրագրի Պարիզի թղթակիցը հեռագրում է հետևեալը.

«Եապօնա-ռուսական ընդհարման մասին այստեղի պաշտօնական շրջաններում այժմ այդպիսի լաւատեսութեամբ չեն խօսում, ինչպէս մի քանի օր առաջ։ Այստեղ երկիւղ են կրում, որ Եապօնիան հարց կը բարձրացնէ այն մասին, որ Ռուսաստանը երաշխաւորութիւն տայ իր յանձն առած պարտաւորութիւնների համար։ Այն ինչ բոլոր փորձառու մարդիկ ասում են, որ դիպլոմատիական բանակցութիւնների ժամանակ մի բան այնքան վնասակար չէ խաղաղութեան համար, որքան երաշխաւորութիւնների պահանջը։ Արդէն այն, որ այդպիսի մի պահանջ անվում է, ցոյց է տալիս վիրաւորական անվստահութիւն դէպի հակառակորդը։ Բացի դրանից, երաշխաւորութիւն տալ այնպէս դժուար է, որ նրա պահանջը միայն հազուագիւտ դէպքերումն է խաղաղ վերջաւորութիւն ունենում։ Եապօնիան մինչև այժմ յաճախ էր յիշատակում փաստական երաշխաւորութիւնների մասին Ռուսաստանի կողմից։ Ռուսաստանի պահանջին՝ չէզոքացնել հարաւային Կօրէյան, Եապօնիան պատասխանեց հիւսիսային Կօրէյան չէզոքացնելու պահանջով, որը ռուսական պաշտպանութեան բազիսն է Մանջուրիան պաշտպանելու համար։ Ռուսական յայտագրի մէջ, որը պէտք է յանձնվի Եապօնիային, Ռուսաստանը, ինչպէս ենթադրում են կը մերժէ Եապօնիայի այդ պահանջը։ Հարց է ծագում, թէ արդեօք Եապօնիան կը պահանջէ՞ բարոյական երաշխաւորութիւններ, որոնց իրագործումը ահագին դժուարութիւններ է ներկայացնում։ Այստեղ կարծում են, Ռուսաստանը ոչինչ զիջումներ չի անի Մանջուրիայի վերաբերմամբ և կը պնդէ հարաւային Կօրէյայի ափերը չէզոքացնելու վրա։ Ռուսաստանը թոյլատրում է Եապօնիային գրաւել հարաւային Կօրէյան, բայց առանց իրաւունք տալու ափերն ամրացնել, որովհետև Ցուշանը և Միզամպօն ամրացնելուց յետոյ եապօնական ծովը կը փակվի։ Հարաւային Կօրէյի հանդէպ գտնվող եապօնական կղզիների ափերը արդէն ամրացրված են, իսկ Կօրէյական ջրանցքը, Կօրէյի հարաւային ափերի վրա մարտկոցներ կառուցանելու դէպքում, բոլորովին կը փակվի։ Այդ դէպքում, Եապօնիան եապօնական ծովի կատարեալ տէրը կը դառնար, որը մինչև այժմ բաց էր բոլոր երկիրների շոգենաւային երթևեկութեան համար։ Ռուսաստանը այդպիսով պաշտպանում է ընդհանուր եւրոպական շահերը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պարսկաստանի նոր նշանակված առաջին մինիստր Էյն-ուլ-Դովլէ, Շահի հօրեղբոր որդին է և Լօրիստանի ու Արաբստանի նահանգապետ նշանակվելուց առաջ Շահի պալատական պաշտօնեայ էր Թաւրիզում, դեռ այն ժամանակ, երբ Պարսկաստանի այժմեան Շահը գահաժառանգ էր և վարում էր Թաւրիզի ընդհանուր-նահանգապետի պաշտօնը։ Պարսկաստանի այժմեան առաջին մինիստրը 55 տարեկան է. նա համարեա Շահի հասակակիցն է։ Առաջին մինիստրի հարազատ եղբայրը զինուորական մինիստր է և սպասալարի, այսինքն Պարսից կայսրութեան բոլոր զօրքերի գենեռալիսիմուսի տիտղոս ունի։ Առաջին մինիստրին, առանց սխալվելու, կարելի է ազգային կուսակցութեան ներկայացուցիչ համարել։ Ազգային կուսակցութիւնը շատ զօրեղացաւ Պարսկաստանում և շատ եռանդուն գործունէութիւն սկսեց ցոյց տալ։ Պարսկաստանի նոր սադրազամը իր հայրենակիցների մէջ շատ կրթված և լուսաւորված մարդ է համարվում, ի հարկէ այդ խօսքի տեղական նշանակութեամբ։ Դժբաղդաբար, նա, ինչպէս և նախկին սադրազամը, օտար լեզուներ չը գիտէ։

—Ինչպէս յայտնի է, դաշնակցական վերջին ընտրութիւնների ժամանակ Աւստրալիայում կանայք ձայն տալու և իրանց թեկնածութիւնը դնելու իրաւունքն ունէին։ Ահա թէ ինչ են հաղորդում աւստրալիական լրագիրները այդ ընտրութիւնների մասին. «Թէպէտ և կանանցից ոչ մէկը չընտրվեց, այնուամենայնիւ ընտրողները շատ լուրջ վերաբերվեցին դէպի իրանց թեկնածութիւնները։ Օրինակ, տիկին Անդէրսոն (մինիստրական կուսակցութեան), քուէարկվելով պատգամաւորների ժողովի անդամ ընտրվելու համար, ստացաւ երեք անգամ աւելի ձայներ, քան նրա հակառակորդը), բայց մի և նոյն ժամանակ. աւելի քիչ ձայն, քան ազատ առևտրի ներկայացուցիչը, որը և ընտրվեց։ Տիկին Հոլլտէյն, քուարկվելով սենատում, ստացաւ մօտ 50,000 ձայն։ Սակայն ընտրվելու համար հարկաւոր էր ստանալ ոչ-պակաս 82,000 ձայնից։ Քուէարկվելով Նոր-Հարաւային Վալիսի սենատի համար, տիկին Բինտլէյ ստացաւ 12,055 ձայն, իսկ տիկին Մարտէլ 11,914 ձայն։ Երկուսն ևս ազատ առևտրի ներկայացուցչուհիներ են։ Ընդամենը 60,000 ձայներից աւելի տրվեցան կին թեկնածուներին։

—Պրուսական լանդտագում յունվարի 11-ին տեղի ունէին վիճաբանութիւններ լեհական հարցի վերաբերութեամբ։ Կանցլեր կոմս Բիւլով յայտնեց, որ լեհական ագիտացիան Վերին Սիլեզիայում ներկայացնում է հակապրուսական և հակագերմանական բնաւորութիւն և նպատակ ունի անջատել այդ նահանգը Գերմանիայից։ Այն ինչ Վերին Սիլեզիան, երկաթի և ածուխի երկիրը, անհրաժեշտ է Գերմանիայի համար տնտեսական և պատերազմական տեսակէտներից։ Լեհական անգիտացիայի հետ ձեռք ձեռքի տուած է ընթանում և սոցիալիստական ագիտացիան։ Ի նկատի ունենալով այդ, անհրաժեշտ է այդպիսի միջոցներ ձեռք առել թէ Պոզնանում և թէ Արևմտեան Պրուսիայում։ Գերմանական բարձր դասակարգերը պէտք է պաշտպանեն կառավարութիւնը այդ գործի մէջ։ Կառավարութիւնը չի թողնի գերմանացիներին Վերին Սիլեզիայում և ամեն ինչ կանէ նրանց պաշտպանելու համար։ Կոմս Բիւլովից յետոյ Ֆինանսների մինիստր Բաշնբաբէն յայտնեց, որ կառավարութիւնը չի փոխի իր քաղաքականութիւնը լեհացիների վերաբերմամբ։ Լեհական հողը արդէն մեծ մասամբ անցել է գաղթականական յանձնաժողովի ձեռքը և արդէն ոչինչ չէ մնացել ձեռք բերելու։ Վերջը ժողովրդական լուսաւորութեան մինիստր Շտուդտ տեղեկացրեց դպրոցական նոր օրէնք հրատարակելու մասին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 Յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 19-ին, Զմեռային պալատում, Նոցա Կայսերական Մեծութիւններին մօտ կայացաւ առաջին մեծ պարահանդէսը։

Կ. ՊՕԼԻՍ։ Հէնց որ քաղաքացիական գործակալները բաւականաչափ ծանօթանան ըէֆօրմներին վերաբերեալ կարգադրութիւնների հետ և կատարեն անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները նրանց գործադրութեան համար, դաշնագիր պետութիւնների դեսպանները հոգ կը տանեն, որ ըէֆօրմների գլխաւոր տեսուչ Հիլմի փաշայի այժմ գոյութիւն ունեցող կախումն Ելդզ-Քէօշկից և Բ. Դռնից համապատասխան կերպով նուազէ։

ՏՕԿԻՕ։ Կայացաւ մինիստրների խորհուրդ, որ տևեց 8 ժամ։ Հաղորդում են, որ ռուսաց եօթն զօրադունդ դիմում են Եօլ, որպէս զի գրաւեն Անդունը և ուրիշ մի քանի կէտեր այդ գետի հարաւային ափերին. մի քանի զօրախմբեր արդէն գտնվում են այնտեղ։

ԱԹԷՆՔ։ Պատգամաւորների պալատում, մինիստր-նախագահ Տէօտոկիս բացատրեց նոր կաբինետի ծրագիրը։ Նրա հիմնական դրութիւնը՝ զօրքի վերակազմութիւնն է, որի իրագործման համար նոր հարկեր կը մտցնվին։

ՀՌՕՄ։ Պատգամաւորների պալատը։ Տուրինի համալսարանի գրատան մէջ եղած հրդեհի մասին հարցապնդումի առիթով, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը յայտնում է, որ 4500 ձեռագիրներից ազատված են 1000-ը, այն ևս ամենաթանկագին ձեռագիրները։

ՊԷԿԻՆ։ Իւնշիկայ հրաժարվեց շտաբի պետի պաշտօնավարութիւնից, որովհետև պաշտօնակերը հակառակվեցին նրա ծրագրին՝ զօրքի վերանորոգչութեան մասին. նա մնում է սակայն Զիլիի ընդհանուր նահանգապետ։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Նաւահանգստում կանգնած «Դրօմօբոյ», «Ռուսսիա» «Բօգատիր», «Բիւրիկ», և «Լինա» նաւերը պատերազմական դիրք ընդունեցին. բոլոր փայտեղէն մասերը հեռացրված են։ Նաւերը կազմ և պատրաստ են անմիջապէս դուրս գալու։ Ջրանցքը մաքրված է և պահպանվում է սառցահատներով։

ՄՕՍԿՎԱ։ Նահանգական զեմստվային ժողովը տուաց Մոսկվային բարեգործական նպատակների համար 48,000 բուբլի։

ԼՕՆԴՕՆ։ Մինիստր-նախագահ Բալֆուր հիւանդացաւ ինֆլուենցիայով. բարդութիւններ չը կան։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Թատրոնի հրդեհից վնաս կրած օպէրէտային արտիստներին շնորհված է կաբինետից նպաստ 5000 ր. և հաւաքված է 1,500 ր. նրանց օգտին տրված բարեգործական ներկայացումից։

ՐՕՍՏՕՎ։ Քաղաքին թոյլատրված է 200,000 ր. փոխառութիւն սպանդանոցների շինութեան համար։

21 յունվարի

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ «Вост. Вѣстникъ» հաղորդում է, որ Սէուլ-Փուզանեան երկաթուղին գրաւել է եապօնական պահակախումբը։ Սէուլի եապօնական դեսպանութեան պաշտպանութեան համար բերված են մի քանի թնդանօթներ։ Կառուցանվում են շինութիւններ հեծելազօրքի տեղաւորման համար։ Կօրէական կառավարութիւնը կրճատում է մինիստրութիւնների շտատները. առաջինը կրճատված է երկրագործութեան վարչութիւնը։

ՍՕՖԻԱ։ (Ընդդիմ. շրջաններից)։ Բոլգարական լրագիրները դեռ շարունակում են ստանալ սահմանից յուզիչ լուրեր թիւրքական պահակակէտերի սաստկացման և զօրքեր դալու մասին։ Լաւատեղեակ շրջաններում այդ լուրերը չափազանցրված են համարում։

Կ. ՊՕԼԻՍ։ Սանիտարական խորհուրդը փոխեց կարգադրութիւները Սիրիայի ափերից եկող նաւերի և մթերքների վերաբերութեամբ։

ՍԻԳՆԱՊՈՒՐ։ Եկաւ եապօնական զինուորական նաւ «Նիսսեպ». «Կասուգան» սպասվում է վաղը։

ԼՕՆԴՕՆ։ (Ռէյտէր)։ Այսօր տեղի ունեցաւ պարլամենտի բացումը։ Գահական ճառի մէջ ասված է, թէ Անգլիայի յարաբերութիւնները միւս պետութիւններու հետ առաջվայ պէս գոհացուցիչ են։ Յիշվում է Ֆրանսիայի հետ կայացած համաձայնութեան մասին, որը, նշա-

նաւոր կերպով, պէտք է նպաստէ այն բանին, որ միջազգային վէճերը ծագած ժամանակ կը դիմեն միջնորդ դատարանի. այդպիսի համաձայնութիւնների մասին Իտալիայի և Հոլլանդիայի հետ բանակցութիւններ են կատարվում։ Ճառի մէջ հաստատվում է, որ անգլիական կառավարութիւնը ուրախութեամբ ցոյց կը տայ ամեն տեսակ աջակցութիւն՝ Ռուսաստանի և Եապոնիայի մէջ գոյութիւն ունեցող վիճելի հարցերի խաղաղ լուծման համար։ Տիբէտի մասին ճառի մէջ ասված է, որ չինաց կառավարութեան աջակցութեամբ Տիբէտ է գնացել քաղաքական դեսպանութիւն, որպէս զի ապահովէ 1890 թւի Սիկկիմի և Տիբէտի վերաբերմամբ կայացած համաձայնութեան կատարումը։ Պէկինից ուղարկված է չինական պաշտօնեայ՝ միանալու այդ դեսպանութեան։ Թագաւորը յոյս ունի, որ չինական և տիբէտեան իշխանութիւնների հետ համաձայնութիւն կը կայանայ։

ԼՕՆԴՕՆ։ Այստեղի մի եապոնական պաշտօնեայ, որին ծանօթ են բանակցութիւնների բոլոր մանրամասնութիւնները, յայտնել է Ռէյտերի գործակալութեան, թէ Ռուսաստանի պատասխանի յապաղումը պէտք է վերագրել ոչ թէ նրա ցանկութեան՝ պատերազմական պատրաստութիւններ անելու, այլ այն բանին, որ Ռուսաստանը իրապէս աշխատում է հաթել վէճը խոհեմ և բարեկամական եղանակով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ
ՀԱՆՐԱՄԱՏՈՒՅՑԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
Առաջին գրքոյկը
ԱՆԴԷՐՍԸՆԻ ՀԷՔԻԱԹՆԵՐԸ
Պատկերազարդ, հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ, Թարգմ. Տ. Զաւէճի։
ԳԻՆԸ Է 50 կոպէկ։
«Պահեստը բացառապէս գտնվում է «Դուտենբերգ» գրավաճառանոցում, որին կարող են դիմել բոլոր գրավաճառանոցները և քանակութեամբ գնողները, ստանալով 25% զեղչ։
3—3

Լոյս տեսաւ Ա. Վրոյրի
ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԸ
303—1903
Լուսանկարչական ստէրէօսկոպ պատկերների ժողովածուի Ա. մասը. բաղկացած Էջմիածնի և շրջակայ վանքերից, ճեմարանի, Արարատի և այլ տեսարանների 25 պատկերներից. գինը 6 ռուբլի, ճանապարհածախսը գնողի վրա է։

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ
Ստէրէօսկոպի պատկերների ժողովածուի Ա. մասը, 50 պատկերներից բաղկացած, գինը էժանացրած է. 10 ր.։ Օրերումս լոյս կը տեսնի նոյն ժողովածուի Բ. մասը 50 պատկերներից բաղկացած. գինը 10 ր.։ Դիմել Թիֆլիս, «Գուտենբերգ» գրավաճառանոցը։ Իսկ Բագու Եղբ. Տէր-Յովհաննիսեանցների խանութը։
3—3

ОТКРЫТА ПОДПИСКА
на 1904 годъ
на ежедневную общественно-литературную и политическую газету
„БАКУ".
ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ съ доставкой 7 руб.; съ пересылкой—8 руб. 50 к.
Подписка принимается въ г. Баку, въ конторѣ редакціи (Парапетъ, домъ Степановой).

Զեռքի տակ ունենալով բաւական քանակութեամբ
ՀԱՅԵՐԷՆ ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐ
Կ. Պոլսի, Վենետիկի, Վիէննայի, Երուսաղէմի, Զմիւռնիայի, Թիֆլիսի և այլ տեղերում լոյս տեսածներից, նաև յանձն եմ առնում հայթայթել ցանկացողներին նոյն տեղերում լոյս տեսած զանազան գրքեր և պարբերական հրատարակութիւններ։
Դիմել հետևեալ հասցէով. Балаханы, Т—ва «Сабунчи», уч. 68. Л. А. Горгизянъ.
3—3

ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Հիգշաբթի, յունվարի 22-ին, հայոց դրամատիքական ընկերութեան խումբը
Տ. Մայսուրեանցի բենեֆիսին
կը ներկայացնէ առաջին անգամ դը Բերտոի և Սիմոնի կոմէդիան
ԶԱՂԱ
5 արար.։ Թարգ. Վ. Տիրացեանի
Մասնակցում են. տ.տ. Ազնիւ, Աւետեան, Խիթարեան, Մայսուրեան, Մէլիքեան, Նոնիկեան, Զմշկեան, Վարդուհի, պ.պ. Աբէլեան, Ագեան, Ալիխանեան, Աղայեան, Աւետեան, Մամիկոնեան, Յարութիւնեան, Պետրոսեան, Ռշտունի, Տէր-Դաւթեան և ուրիշները։
Սկիզբն է ճիշդ ժամը 8-ին, երեկոյեան։
Տեղերի գները բենեֆիսային են։
Պատրաստվում է ներկայացման համար «Կտակ», «Հարստահարուած առաքինութիւն» և ուր.
2—2 Բեժիսոր Մ. Զաբար

Ծախվում են
Երևանի դեղձից և ծիրանից տանու պատրաստած առաջին տեսակի կոնսերներ։ Դիմել Դվորցովայա փողոց, Վիկտորիա հիւրանոց № 6, և Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Իշխ. Օրբելեանի № 15, խանութ «Բիժուտերի-Իմիտասիոն»։ (Չ. հ. կ.) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։
44—100

Լոյս տեսաւ
2-րդ տպագրութեամբ (փոփոխված)
Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
կազմած
ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ
Երրորդ և չորրորդ տարիների համար
Համառօտ հայերէն-Ռուսերէն բառագրքով
Գինն է 70 կոպ.
(246 երես)
Դիմել՝ Թիֆլիս «Մուրճի» խմբագրատան կամ «Գուտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցներին։ 100 օրինակից աւելի բանակութեամբ ձեռք բերողներին 20% զիջում։
5—5

Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
ՕՐԱՑՈՑՑՆԵՐԸ
«ՓՈՅԻ», «ՊԱՏԻ», «ՍԵՂԱՆԻ» և
ԱՐՄՅԱՆՍԿԻՙ ԿԱԼԵՆԴԱՐԵ
ՍՊԻՏԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹՎԻ ՀԱՄԱՐ
ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹՎԻ ՀԱՄԱՐ
ՍՊԻՏԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍՊԻՏԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍՊԻՏԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍՊԻՏԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում։
Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում։
Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում։
Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում։
Մ. ՉԻՄԻՇԿՅԱՆ
Продается во всѣхъ книжныхъ магазинахъ
Հասցէն. Թիֆլիս՝ Մակար Զմշկեան։
2—5

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ
գրախանութում վաճառվում են Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ աշխատութիւններից
«Սասուն» Աշխարհագրական քարտէզով, երկրորդ տպագրութիւն, գինն է 20 կ.։
«Պատրիկեանի նամակները»—60 կ.։
«Հարեւաններ», «Մինասի եղը», «Զղիտ աղջիկը», «Ծանր քարը», «Մեր ինչը կը պակսի»։ «Նուազած կեանքը» («ԿԵԱՆՔԻ ԴԾԵՐ») գինն է 30 կ.։
«Մանրանկարներ» երկու հատոր—1 ր. 50 կ. հատ թղթի վրա 2 ր.
Դիմել՝ Книжный магазинъ «Гуттенбергъ» (Дворцовая), Г. Галустяну. 2—10

ԳՐԻԳՈՐԻՑ ՄԱՏՎԷԵՎԻՉ
ԻՕԽՎԷԴ
Ընդունելութիւն առաւօտեան և բերանի խոռոչի հիւանդութիւնների, առամ հանելու, բժշկելու, պլոմբ անելու, մաքրելու և արհեստական ատամներ շինելու։
Հասցէն՝ Михайловская ул., № 108, противъ Кирки։ Ընդունելութիւնը առաւօտեան 10-ից մինչև երեկոյեան ժամի 7-ը։ 12—30

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
ՋԱՒԱԴ ԲԷԿ ԲԱԼՈՒՂԵԱՆ
ՌՕՍՏՕՎԻՑԴՕՆԻ վրա տեղափոխվել է ԱՐՄԱՎԻՐ և ընդունում է գործեր՝ իր մասնագիտութեան վերաբերեալ։ Հասցէն. Армавиръ, Кубанской области. Присяжному Повѣренному Джевадъ Бекъ Балугіанъ. Телефонъ № 159. 4—5

Լոյս տեսաւ № 7
ՇԱՀԻՒՐԻ
ԵՂՕՒ ՔՈՌ ԲԱԽՏԸ
24 երես, գինը 3 կոպ.
Դիմել գրավաճառներին։
2—3

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆԻ
քառաձայն պատարագի արարողութիւն ձեռք բերել ցանկացողները պէտք է դիմեն նրա խնամակալ Ադամ Եկմալեանին։ Հասցէն. сел. Вагаршапатъ, Адаму Екмалянъ.
2—3

Լոյս տեսաւ № 5 էլ. Օժեկո
ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿ
ճօվելլա
Թարգմ. Ս. Շահվերդեանց։
—
32 երես, գինը 5 կոպ։
—
Վաճառվում է Թիֆլիսում՝ Կենտրոնական և Գուտենբերգ գրավաճառանոցներում. Բագուում՝ «Պրոմէթէոս» ընկ. գրավաճառանոցում և Յ. Ղազանչեանի մօտ։ 2—2

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ
ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
Աշակերտաց համար
1. Դասատետր կրօնի ա. տարի . — 25
2. » » բ. » . — 20
3. » » գ. » . — 30
4. Հին-ուխտ դ. » . — 35
5. Նոր-ուխտ ե. » . — 40
6. Գործք առաքելոց զ. » . — 40
Ուսուցչաց համար
7. Ուղեցոյց կրօնի—հին-ուխտի (սպառ.)— —
8. » » —նոր-ուխտի . 2—50
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ. 1—50
10. » » » Ե. » — 50
Ինձ դիմողները ստանում են 1) 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ։
Կարելի է դիմել—1) ինձ (коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ «Гуттенбергъ».
38—100 Սահակ քահ. Սահակեանց

Продолжается подписка на 1904 г.
на большую ежедневную съ полной программой, выходящую въ Баку, газету
„БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ"
въ газетѣ принимаютъ участіе:
Н. А. Азефъ, Н. П. Ашешовъ, М. С. Балабановъ, Е. З. Барановъ, Кн. В. В. Барятинскій, Г. А. Берлинъ, Безпокойный, В. Богучарскій (В. Я. Яковлевъ), В. В. Брусянинъ, Л. К. Буюъ, Х. С. Варданянъ, П. А, Васильевъ. Ю. А. Веселовскій, В. С. Вейншалъ, К. Воиновъ, Вѣди-Азъ, Л. Е. Габриловичъ, П. П. Гелейшвили, В. Г. Гольцевъ, Горинъ, С. О. Гулишамбаръ, М. М. Гутманъ, Н. К. Дживилеговъ. К. И. Диксонъ, С. Докукинъ, (С. Д.), В. Е. Ермиловъ, З. Н. Журавская, Б. И. Ивинскій (Б. Борскій), А. С. Изгоевъ, Ю. Кавказскій, М. В. Кечеджи-Шаповаловъ, Н. П. Козеренко, А. Н Котельниковъ, Г. Д. Кускова, Д. А. Лицевъ (Далинъ), Мечтатель (Ѳ. Ѳ. Трозинеръ), Мрачный Типъ, Е. С. Некрасова, А. И. Новиковъ, П. Орловецъ, Н. Падаринъ, А. Б. Петрищевъ, Конст. М. Пономаревъ, В. Португаловъ, С. Н. Протоповъ, Д. Д. Семеновъ, С. С. Семеновъ, М. В. Собинина, Орестъ Семинъ, А. С. Скляръ, М. А. Славинскій, М. Ф. Славинская, д-ръ Л. Соколовскій, Ю. Стекловъ, С. А. Тараянцъ, А. Теръ-Арутюновъ, В. Ѳ. Тотоміанцъ, М. И. Туганъ-Барановскій, А. Ю. Финнъ, М. И. Фридманъ, В. І. Харитонъ, Чужой (И. К. А.), Г. И. Шрейдеръ, И. И. Шрейдеръ, В. И. Шарый. И. Г. Эйзенбетъ и друг.
Газета имѣетъ собственныхъ корреспондентовъ въ крупныхъ городахъ Кавказскаго края, а также въ С.-Петербургѣ, Москвѣ, и заграницей.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	Для городск. подписчиковъ	Для иногород.
На годъ . . .	7 р.	8 р. 50 к.
На 6 мѣсяцевъ .	4 р. — к.	5 р.
На 3 мѣсяца .	2 р. 50 к.	3 р.
На 1 мѣсяцъ .	1 р. — „	1 р. 50 к.

1—3

ДЛЯ ГОДОВЫХЪ ПОДПИСЧИКОВЪ ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА:

	Для городск.	Для иногород
При подпискѣ .	3 р.	4 р. 50 к.
Къ 15 февр . .	2 р.	2 р. — „
Къ 15 мар . .	2 р.	2 р. — „

Редакторъ-издатель Н. А. ГРИНЕВЪ

„Սստրուդնիկ" Գրավաճառանոցը
(Մ. Ա. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ» ԲԱԳԴԻՈՒՄ՝
պատիւ ունի առաջարկել իր ծառայութիւնները հայ հեղինակներին և հրատարակիչներին նրանց աշխատութիւնները վաճառելու գործում։
Պայմաններ և առաջարկութիւններ խնդրում ենք հաղորդել հետևեալ հասցէով՝
Баку, Маріи Сундукянъ. Չ. Կ. 2—5

Կենտրոնական գրավաճառանոցում
Վաճառվում են հետևեալ նոր գրքերը՝
Անդրեեվ Լեօնիդ, Օտարազգին, ռուս. թարգմ. Տ. Յովհաննիսեան, Թիֆլիս, 1903 թ. գ. 10 կ.
Սրամ Զարրգ, Բանաստեղծութիւններ, մտավառ թոթովանքներ, Վենետիկ, 1900 թ. գ. 1 ր.
Բաբուրեան Հ., Դերասանուհի և դերասան, վոդեվիլ 1 գործ., Թիֆլիս, 1904 թ. գ. 20 կ.
Գորկիյ Մ., Մակար Զուդրա, Թիֆլիս, 1903 թ. գ. 10 կ.
Էդմօն Թեռի, Վարժապետը, ֆրանս. թարգմ. Լեոն Մ.-Ադ., Թիֆլիս 1902 թ. գ. 5 կ.
Թառայեան Ս., Թաղված կայծեր, դրամա 5 գործ., պատկերազարդ, Բագու, 1903 թ. գ. 1 ր.
Լեօ, Թաթախման գիշերը, երկրորդ տիպ, Թիֆլիս. 1903 թ. գ. 5 կ.
Լունկեվիչ Վ., Բնութեան երկու մեծ թագաւորութիւնները, պատկերազարդ, Պետերբուրգ, 1903 թ. գինն է 30 կոպ.
Համբարձումեան Հ., Արիւն—էջեր, Բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1903 թ. գ. 15 կ.
Մանկական բեմ, Դաղթականներ, թատրոնական պիէս, Թիֆլիս, 1904 թ. գ. 10 կ.
Մելիք-Թանգեան Ն. Վ., Հայոց եկեղեցական իրաւունքը, Շուշի, 1903 թ. գ. 1 ր. 50 կ.
Նաժիվին, Լեգենդա, Թիֆլիս, 1903 թ. գինն է 7 կոպ.
Նաւասարդեան Տ., Բառգիրք Արարատեան բարբառի (մօտ 5009 բառ ու ոճ), Թիֆլիս, 1903 թ. գինն է 50 կոպ.
Նեպլուեվ, Ի՞նչ է ճշմարտութիւնը, թարգմ. Մամբրէ վարդ., Վաղարշապատ. 1903 թ. գ. 10 կ.
Նիքօշվիլի, Հրաման, պատմուածք, 1 պատկերով, 2 նկարով, Թիֆլիս, 1903 թ. գ. 5 կ.
Շահան-Սիմօն, Ս. պատարագի երգեցողութիւն յաւելուածով, բ. տիպ, Թիֆլ. 1903 թ. գ. 20 կ.
» Ուղեցոյց տարբական ձայնագրութեան, Մոսկվա, 1903 թ. գ. 40 կ.
Շիրվանզադէ, Արտիստը, Թիֆլիս, 1903 թ. գինն է 15 կ.
Պոռշեան Պ., Սօս և Վարդիթեր, վէպ, գ. տիպ., Բագու, 1903 թ. գինն է 1 ր, 20 կ.
Սենս-Իլեր, Բու, պատկերազարդ մանկական գրուածք, Պետերբուրգ, 1903 թ. գ. 12 կ.
Փափազեան Վ., Ասպետ, պատմուածք, Թիֆլիս, 1903 թ. գ. 15 կ.
» Ասի, վէպ պարսկական կեանքից, հեղինակի պատկերով, Թիֆլիս, 1903 թ. գինն է 30 կոպ.
Քամալեան Ս., Երկու աղբերացեղ, զրոյց, բ. տիպ, Բագու, 1903 թ. գ. 30 կ.
» Շէն թագաւորի աղջիկը, հէքիաթ, բ. տիպ, Բագու, 1903 թ. գ. 25 կ.
Օժկոհ Էլ., Սպիտակ ծաղիկ, թարգմ. Ս. Շահվերդեանց, Թիֆլիս, 1903 թ. գ. 5 կ.
Դիմել. Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. 3—3

Дозволено Цензурою. Тифлисъ, 21-го января 1904 г. «Ցպարան ՀԱՅ ՕՐԻՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарьянца, Мих. пр. № 81.